



Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՈՒ ԽԱՂՈՂՈՐՅՆԷՔԸ

Ս. Աստուածածնայ վերափոխման տօնը կը կատարուի Օգոստոս 15-ի մօտիկ Կիրակին: Անիկա եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն մէկն է: Աւանդութեան համաձայն Ս. Կոյս Մարիամի վախճանումէն ետք, երբ բացակայ առաքեալները կը փափաքին գերեզման այցելել ու թաղման վայրը երթալով գերեզմանաքարը կը վերցնեն, Ս. Կոյսին մարմինը այնտեղ չեն գտներ:

Յետագային, եկեղեցական հայրերը հիմնուելով այս աւանդութեան վրայ, կը հաստատեն Ս. Աստուածածնայ վերափոխման տօնը:

Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին, պատարագէն ետք, Խաղողօրհնէք կը կատարուի:

Խաղողօրհնէքին, Աստուծմէ կը խնդրուի օրհնութիւնը եկեղեցւոյ նուրբ բերուած խաղողի ողկոյզներուն, որպէսզի անոնք արժանի դառնան մեղքի թողութեան, կը խնդրուի նաեւ պտղաբերութիւն: Աղօթքէն յետոյ, երեք անգամ կ'օրհնուին ողկոյզները ու կը բաշխուին ներկաներուն: Ժամանակին, այս արարողութիւնը այգիներուն մէջ կը կատարուէր: Քահանան, մկրատը աջ ձեռքին եւ խաչը՝ ձախին,


շարական երգելով, թափօրով այգի կ'երթար եւ հաւատացեալներու ներկայութեամբ խաղողի օրհնութեան արարողութիւնը կը կատարէր:

Սուրբ Աստուածածնայ տօնը եւ Խաղողօրհնէքը եկեղեցական արարողութեան տեսակետով ոչ մէկ կապակցութիւն ունին իրար հետ:

Պարզապէս տօնակատարութեան թուականի եւ եղանակի

յարմարութիւն է՝ Աստուածածնայ տօնին եւ այդ միջոցին հեթանոսական շրջանի տօնակատարութեան միջեւ: Այս տարի Ս. Աստուածածնայ տօնը Օգոստոս 13-ին է:

Սուրբ Աստուածածնայ տօնը եւ Խաղողօրհնէքը եկեղեցական արարողութեան տեսակետով ոչ մէկ կապակցութիւն ունին իրար հետ: Պարզապէս տօնակատարութեան թուականի եւ եղանակի յարմարութիւն է՝ Աստուածածնայ տօնին եւ այդ միջոցին հեթանոսական շրջանի տօնակատարութեան միջեւ: Այս տարի Ս. Աստուածածնայ տօնը Օգոստոս 13-ին է:




ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇՈՇԵԱՆ




Գտի՛ր հրթիռը մուլտրակին հասցնող ճիշդ ճամբան:



Ո՞ր կ'ապրին անասունները: միացու՛ր:



Այս սիւնակներուն մէջ կրնա՞ս ապրող էակները իրեն բաժնել:



Իւրաքանչիւր անասունէն քանի՞ հատ կը տեսնես: թու՛ն եւ արձանագրե՛:



ԽԵՉԱՓԱՌԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Սուրաթանահին պատանի մըն է, որ կ'ապրի Աստրալիա, ծովուն մօտ: Անոր հայրը՝ Ռիքի, ձկնորս է: Սուրաթանահին յաճախ հօրը հետ խեչափառի որսորդութեան կ'երթայ:

Այսօր Սուրաթանահին եւ հայրը շատ կանուխ ճամբայ ելած են: Անոնք խեչափառ որսալու կը մեկնին ծովեզերքը, արեւադարձային անտառին մէջ: Անոնք հողէ ճամբաները ինքնաշարժով կ'էս ժամէն կը կտրեն: Սուրաթանահին եղբայրը անոնց կ'ընկերակցի: Սակայն ան տակաւին շատ փոքր է իր հօր եւ մեծ եղբօր պէս որսալու:

Սուրաթանահին շատ լաւ ծանօթ է վայրի անտառին: Ան կը ցատկէ մեծ ծառերուն մէկէն միւսին: Ան շատ ուշադիր կ'ըլլայ, թէ ո՛ր կը դնէ իր ոտքերը՝ չվիրաւորուելու համար: Տեղափոխուելու ժամանակ ան չի խօսիր, որպէսզի աւելի լաւ լսէ անտառին ձայները: Ան շատ ուշադիր կ'ըլլայ անտառին մէջ, որ օձի մը վրայ չկոխէ, որովհետեւ անոր խայթուածքը կրնայ սպանել քսան վայրկեանէն: Իսկ ամէնէն մօտիկ հիւանդանոցը չորս ժամ հեռու կը գտնուի:

Խեչափառներուն թաքստոցը հասնելու համար Սուրաթանահին պետք է կտրէ վայրի անտառին ջուրերը:

Ասիկա հարց չէ, որովհետեւ իր հագուստները շատ շուտ պիտի չորնան 30 աստիճան տաքութեան պատճառով: Սուրաթանահին եւ հայրը վերջապէս կը հասնին խեչափառներով լեցուն վայրը: Այս պատենաւոր երկկենցաղները անտառ կը հասնին, երբ ծովուն ջուրը կը բարձրանայ: Իսկ երբ ջուրը կը քաշուի, անոնք շուքին կը մնան, մեծ ծառերուն արմատներուն տակ: Սուրաթանահին եւ հայրը պետք է երթան կանուխ յետմիջօրէին, որովհետեւ ջուրը դարձեալ կը սկսի բարձրանալ եւ անոնք կրնան ջուրին մէջ ծուղակը իյնալ:

Խեչափառները գտնելու համար Սուրաթանահին եւ հայրը արմատներուն տակ կը նային: Երբ անոնք խեչափառ մը կը տեսնեն, իրենց ձեռքերը չեն գործածեր, որովհետեւ անոր խոշոր մկրատները կրնան վիրաւորել զանոնք: Խեչափառը իր թաքստոցէն դուրս հանելու համար անոնք երկաթէ երկար կեռ մը կը գործածեն: Երբ խեչափառը յայտնուի, Ռիքի զայն կ'անշարժացնէ՝ իր ոտքը անոր պատեանին վրայ դնելով, ապա նոյն ժամանակ անոր մկրատները կը բռնէ:

Տուն վերադարձին Սուրաթանահին մայրը խեչափառը պիտի եփէ ջուրով լեցուն կաթսայի մը մէջ, եւ ամբողջ ընտանիքը մեծ ախորժակով պիտի ուտէ խեչափառին միսը:



ԱՆՅԱԲԱՏԱԼԻ՛, ԲԱՅՑ ԻՐԱԿ

1. Անուշեղեններ եւ կարկանդակներ զարդարելու համար խոհարարները երբեմն իսկական ոսկի եւ արծաթ կը գործածեն: Այս ձեւով Նիւ Եորքի ճաշարաններէն մէկը իր ճաշացուցակին մէջ դրած է 23 քարաթ արծող, ոսկի տերեւներով ծածկուած պաղպաղակ մը:
2. Եթէ 21978 թիւը 4-ով բազմապատկես, կը ստանաս անոր հայելիին մէջ ցոլացող թիւը՝ 87912:
3. Լուսինին վրայ առաջին գաւաթ մը սուրճը խմուած է 1969 թուականին:
4. Գերմանիոյ Զեօլն քաղաքին մէջ մարդ մը շարժապատկերի սրահին մէջ ամբողջ գիշեր մը բանտարկուած մնացած է, ցուցադրութեան ժամանակ քնանալէն ետք:
5. Կոլֆի գնդակի մը վրայ կը գտնուի մօտաւորապէս 400 փոսիկ: Այս փոսիկները անոր կարելիութիւն կու տան աւելի հեռու երթալու:
6. Կան վարդի տեսակներ, որոնք անուանուած են ի պատիւ գծագրիչներ Փապլօ Փիքասոյի եւ Լեոնարտօ Տա Վինչիի:

